



ԼԵՆՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

12 դեկտեմբեր 200 թ.

ք.Ստեփանակերտ

№ 1-06/299

<<Մեսրոպ Մաշտոց>> արշավախմբի ղեկավար  
պրն Զորի Բալայանին  
<<Արմենիա>> առազաստանավի նավապետ  
պրն Սամվել Կարապետյանին  
Առազաստանավի անձնակազմին

*Շուրջերկրյա ճամփորդության հարգելի մասնակիցներ*

Ի սրտե շնորհավորում եմ ձեզ արշավի առաջին փուլի հաջող ավարտի կապակցությամբ: Այն մեծ խանդավառություն է առաջացրել Արցախում՝ դառնալով ամենօրյա բննարկման թեմա:

Ձեր կողմից իրականացվող նախաձեռնությունը առանձնահատուկ նշանակություն ունի ողջ հայ ժողովրդի համար և հանդիսանում է հայի հավատքի, խիզախության, կամքի և միասնականության լավագույն դրսևորումներից մեկը: Արշավի հաջողությունը պայմանավորված է ոչ միայն արշավախմբի անդամների բարձր արհեստավարժությամբ, այլ նաև նրանով, որ նավի վրա դուք այքի լույսի պես պահում եք մեր ժողովրդի սրբությունները՝ հայկական խաչը, մեսրոպյան այրուբներ, երկու անկախ հայկական պետությունների դրոշները և քաջ հայրդրիների արյունով ներծծված հողը:

Չափազանց կարևոր է համարում ձեր այցելությունը հայոց Սփյուռքի կենտրոններ և գաղթօջախներ: Ցանկացած նման միջոցառում անզևհատելի եռանդ է հաղորդում հայկական ինքնագիտակցության և ինքնության պահպանման, Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման գործին:

Կրկին շնորհավորում եմ բոլորիդ և մաղթում քաջատողջություն, բարի նավարկություն և հաջող վերադարձ հայրենիք:

Անհամբեր սպասում ենք ձեզ Արցախյան հողում:

Բակո ՍԱՀԱԿՅԱՆ